

KNYAZYAN & PARTNERS

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀԱՍՑԵ՝
ՊԱՇՏՈՆ՝
ԳՐԱՖԻԿ՝

«Կնյազյան ընդ Փարթնրս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 9
Կրտսեր իրավախորհրդատու
9:00-18:00, շաբաթ և կիրակի՝ ազատ

Փաստաբանական գրասենյակը աշխատանքի է հրավիրում մտավոր սեփականության իրավունքի ոլորտում մասնագիտացած կամ մասնագիտանալ ցանկացող իրավաբանի: Աշխատանքային փորձը ցանկալի է, բայց՝ ոչ պարտադիր: Աշխատանքը կառաջարկվի հարցազրույցը և պարտադիր եռամսյա փորձաշրջանը հաջողությամբ ավարտած թեկնածուին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների, ապրանքային նշանների և անբարեխիղճ մրցակցության ոլորտում ավագ իրավախորհրդատուների հանձնարարությունների կատարում,
- ապրանքային նշանների հայտերի պատրաստում,
- իրավաբանական հետազոտությունների իրականացում,
- իրավաբանական կարծիքների, հայցադիմումների, բողոքների և այլ փաստաթղթերի կազմում,
- տվյալ պաշտոնի հետ կապված այլ պարտականություններ:

ՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- բարձրագույն իրավաբանական կրթություն,
- մտավոր սեփականության իրավունքի ոլորտի օրենսդրության իմացությունը (ՀՀ, ԵՏՍ և միջազգային օրենսդրություն), ինչպես նաև ՄՄ իրավունքի ոլորտի դատախազի մասնակցությունը ցանկալի է,
- հայերենի գերազանց (գրավոր և բանավոր) իմացություն,
- անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունն առավելություն է,
- համակարգչային հմտություններ (word, excel), այլ ծրագրերի իմացությունը (power point, outlook և այլն) ցանկալի է,
- հաճախորդների սպասարկման հմտությունը ցանկալի է,
- թիմային աշխատանքի և շփման հմտությունը առավելություն է,
- բարձր մոտիվացիա և նախաձեռնողականություն, հստակ սահմանված ժամկետներում աշխատելու ունակություն,
- լարված աշխատանք կատարելու ունակություն,
- ուշադրություն մանրուքների նկատմամբ,
- կատարած աշխատանքի հանդեպ բարձր պատասխանատվություն,
- քաղաքավարություն,
- գործընկերներից և առհասարակ սովորելու կարողություն և հմտությունների շարունակական զարգացման պատրաստակամություն:

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները (CV կամ Resume) էլ-նամակով hripsime@knyazyanlaw.com հասցեին:

ԿԱՐԵՎՈՐ Է: *Էլ-նամակում հարկավոր է պարտադիր նշել, թե ինչու է դիմումատուն ցանկանում մասնագիտանալ ՄՄ իրավունքի ոլորտում և ինչու է ցանկանում աշխատել Knyazyan & Partners փաստաբանական գրասենյակում:*